Մի բան միայն, որ ցանկալի է աւելացնել ինձ այս տեղ, և այդ է բարի և խոնարհ առաջարկութիւնն մեր առ Վեհափառ Հայր և առ բարձր Հոգևորական Ցեսչութիւնն օգնելու որպիսիևիցէ միջոցով. այդ տեղում մի աղջկանց ուսումնարան բանալու՝ մինչ կայ և գործում է Մկրտիչ Քահանայն, Սորանով կատարեալ կլինի այդ գիւղի երջանիկ ապագայն, սորանում աւարտ կստանայ Տէր Մկրտչի աշխատանաց բարի ակնկալութիւնը։

Ո՞չ ապաքէն որդիք պէտք է և իրաւունք ունին պահանջելու Հօրից բարի և օգտակար բան, և ահա՛ ես և իմ հետ Շ.խմահմուտցի Հայերը վստահանում ենք անելու այսպիսի խնդիր մեր Ազգապետից—մեր Բարձր Հայրերից։

Մեր ակնկալութիւն—իմ ցանկութիւնը պսակուած պիտի տեսնամ միսանդամ այս գիւղը պատահելու միջոցում. խօսքս վերջացնում եմ ասելով ,,մեծ յուսով սպասում եմ,,։

Ն՛ահապետիանց Եղիշաւարդ.

Ի 14-ն Մայիսի 1871 ամի
Ի Նախիջևան

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Որովհետև ես թողի Թիֆլիս քաղաք, Հայկան Աշխարհ օրագիրը դադարեց ներկայ թուին Ապրիլի և Մայիսի ամսատետրակը հրատարակելուց յետ։

Հայկան Աշխարհ ներկայ 1871 թուխս ստորագրողներից ստացված փողից հանելով հինգ ամսի համար Հայկան Աշխարհ Խմբագրութեանը հասանելին, մնացած դրամը պատիւ ունիմ ահա ներկայացնել Աբաբի Խմբագրութեանդ, և խնդրում եմ մնացած ամիսներին բարեհաճեցէք ուղարկել Աբաբը Հայկան Աշխարհ փոխարէն առանձին ցուցակով ներկայացրած Մեծ. Պարոններին։

Իսկ այն մնացած ստորագրողներից, որոնք դեռ ևս վճարած չէին բաժանորդագինը, խնդրում եմ ահա բարեհաճեն հասցնել ինձ կամ 5 մանէթ, եթէ ցանկանում են այսուհետև ներկայ թուին Հայկան Աշխարհ փոխարէն Աբաբը ստանալ, կամ 2 ման. 10 կ., որ պատկանում է Հայկան Աշխարհ Խմբագրութեանը ներկայ թուիս անցած 5 ամիսների համար, երբ նոքա ստանում էին օրագիրը։

Հայկան Աշխարհ Խմբագրող
Ս. Ապեղեանէ։

1871 յունիսի 15

ԲՈՂՈՔ Ի ՇՈՒՇԻՈՑ

Խմբագրութեան Աբաբ ամսագրոյ

Հոգաբարձութիւնս Մեղու Հայաստանի Մայիս 1 թուով համար, 6 թերթին մէջ նոյն ըստ լրոյ պատուարժան խմբագրի Շուշոյ քաղաքի ազգային Հոգևոր դպրոցի գրութեան և Հոգաբարձական կառավարութեան վերայ արած հակասական դիտողութիւնները և անհիմն լրոց վերայ հիմնուած ընդդէմ ճշմարտութեան պատրուակեալ ստութիւնները կարդաց. բայց ոչ խռովեցաւ և ոչ ցաւեցաւ. վասնզի գիտէ որ, մեր Ազգային լրագրներէն մէկ քանիսն սովոր են առանց հիմնաւոր տեղեկութեան ընդվայրախօս թղթակցաց խօսքին հաւատ ընծայել. երբեմն կամաւ և երբեմն ակամայ նոցա խօսքերով տոգորուիլ. ճշմարտութիւնը այլ ալիք, լոյսը՝ խաւար, բարին՝ չար, բարեկարգութիւնքը՝ անկարգութիւն հրատարակել։

Թէպէտ Հայ հասարակութեան բուն 'ի լան և Ազգասէրն մնան արդէն տեղեակ է լրագրաց ոմանց բռնած այսպիսի անկանոն ընթացից, ուստի և անարժան կ'համարէր Հոգաբարձութիւնս այնպիսի անտեղի գրութեան ուշադրութիւն դարձնել և կամ պատասխանել, սակայն որպէս զի տկարամիտ մտքեր և մեր հեռաւոր Ազգայինք չ'գայթակղուին, վասնորոյ թողլով նոյն գրութեան ուրիշ անուղղադատ կէտերու վերայ առ այժմ խօսիլ, միայն պարտք կ'համարի այսչափ ինչ ծանուցանել որ, դպրոցս ամենից աւելի ապահովված դպրոցներից մին անուանելը երևակայական ցնորք է. Հոգաբարձութիւնս իրրև իւր պարտուց անծանօթ, իւր պարտականութիւնք և իրաւունքները կանոնաւորապէս չգործադրող մեղադրելը՝ լոլորովին զլապարտութիւն է. և սորա աշխատանքը

թեոի և անպտուղ համարելը՝ ըստ ամենայնի անբարեսէր մտաց արգասիք և մարդկութեան և ճշմարիտ Հայութեան ոգոյն դէմ է. վասն զի Հոգաբարձութիւնս իւր այս Ազգային վսեմ պաշտօնը ստանձնած օրէն թէ Ազգիս Վեհափառ Հայրապետի ազգմամբ և թէ իւր խղճի թելադրութեամբ իւր անհրաժեշտ պարտաւորութիւնը քաջ զգալով, ջանացել է զնոյն անթերի և իսկութեամբ կատարել յօգուտ դպրոցին ըստ ներելոյ հանգամանաց. մանաւանդ իւր Վեհափառ տէրբ հօր քաջալերութեամբ և Հոգաբարձութիւնս հեռատես և գործունեայ նախագահին քաջալերեալ դարձած օրէն ըստ ամենայնի միաբան խորհրդակցութեամբ գուն գործել է դպրոցիս ներքին և արտաքին բարեկարգութեան վերայ հսկել և նորանոր աղբիւրներով ըստ բաւականին ապահովել դպրոցը. Բայց ապահովութիւն ասելով՝ թող չ'հասկացուի նոյն խմբագրի գրութեան համեմատ ըստ օրինակի պլոց դպրոցաց աղլիս՝ բաղմաթիւ կրպակներով, մեծատարած այգեաց շքեղ և բազմարդիւն տանց և պլոց անվթար եկամտից պատրաստական արդիւնքներով հաստատուն, որով գրեթէ իբրև գրպանից հանել գործածել դիւրութեամբ, ոչ, վասնզի չունի այսպիսի և սոցա նման անքոյթ սեպհականութիւնք, այլ բաց ի երկու վանօրէից մասնաւոր եկամտից, որոնք տարժանակիր միջոցներով հազիւ կ'ժողովուին, ըստ մեծի մասին կախուած է պսակաղրամներէ, որբադրամներէ և պլոց եկեղեցականաց յատկացեալ տուրքերէ, որոնք ի ձեռն եկեղեցական գործակատար անձանց մեծամեծ դժուարութեամբ կ'հաւաքուին Հոգաբարձական գանձարանը, զորս Հոգաբարձութիւնս իւր նախագահի արթուն վերահասութեամբ և իւր Հոգաբարձական աղաւ իրաւամբ, բացարձակ և անբռնադատ ներգործութեամբ և անաչառ մատակարարութեամբ ի ծախս պիտանացու աշխատասէր պաշտօնատարաց դրպրոցին և պլոց կարևոր պիտոյից կանոնաւոր տընտեսութեամբ կ'գործադրէ.

Կթողու Հոգաբարձութիւնս յիշատակել մի ըստ միոջէ իւր պլևայ հաւատարիմ գործողութիւնները. որոնք իւր համար բաց ի ճշմարիտ պարծանքէ փառաւորութենէ, ոչինչ չ'են կարող արտայայտել, և գիտէ որ ընդհանրապէս խօսողն ճպռանց պէս միայն երգել գիտէ և ոչ գործել, վասնորոյ կլռէ, միայն վստահութեամբ այս կը-ծանուցանէ որ, այս Շուշոյ Ազգային Հոգևոր դպրոցը հանուր Ռուսաստանի Ազգային — Հոգևոր դարոցաց մէջ իւր Հայկական յատկութիւններով իւր իսկական նպատակի ուղղութեամբ և Հայկաբանական յառաջադիմութեամբ միակ ուսումնարան կարող է ներկայանալ ազգին, Եւ այս ինքնա բարձ սնոտիաբանութիւն թող չ'կարծուի. այլ յանուն ճշմարտութեան և յանուն արդարութեան կ'խօսի, գործով և ոչ բանիւ, յայտնի և ոչ ծածուկ. բացայայտ և ոչ քողարկեալ։ Դպրոցիս գերազոյն խնամակալի Վեհափառ տէրբ Հօր ուշադիր քննութիւնը և Հայ հասարակութեան բոլոր ողջամիտ անձինքը կ'հրաւիրէ, եթէ հնար է անձամբ ընել, անձամբ ականատես լինել դպրոցիս բարեկարգութեան և յառաջադիմութեան, և չ'լինի թէ խաբուին այնպիսի ընդունայն ստապատիր խօսքերէ, որն որ մի քօղածածուկ ստաբան թղթակցի բերանէն լսել այնչափ զարմանալի չ'էր, որչափ մի ազգասէր համարուած խմբագրի բերանէն, որուն պարտքն է, ինչպէս որ ամենայն լրագրաց, ոչ թէ այնպիսի շինծու լուրերու հակասութեամբ հակամիտել, բերան մեղր առնող և տան մէջ թոյն ունեցող մեղուներու նմանել, զրպարտութեան խնձորները ցաւակցական խրատներով ոսկեզօծել և գլորել, զանազան դիմակներ երեսին առնուլ. ճշմարտութիւնը ընդ քօղով թագուցանել և ստութիւնը իբրև ճշմարտութիւն հրատարակել, այլ անաչառութեամբ և անկողմնակցութեամբ յառաջադէմ ուսումնարանաց վիճակի վերայ իւր ուրախութիւնը հանուր հասարակութեան յայտնել. իսկ ընդ հակառակը յետ իսկութեամբ, և ոչ թէ հակամէտ յօժարութեամբ, կատարեալ տեղեկութեամբ ազգիս յետադէմ դպրոցաց վիճակը և նորա շարժառիթ պատճառները հասկանալէն զկնի. յականէ յանուանէ հրատարակել և յայտնել իւր ցաւակցութիւնը։

Պ. Սիմէոնեանցի ազգասիրութենէն կ'յուսացուի որ, Հոգաբարձութիւնս այսպիսի անաչառ և ճշմարիտ խօսքերու վերայ չ'պիտի ցաւի. վասնզի

եթէ ինքն անհիմն լուրերու զակատելով, երբեմն դպրոցիս մահ երազելով, երբեմն անյաջողութիւն և Հոգաբարձական դրութեան վերայ կարծես հիւանդութիւն երևակայելով. որ բոլորովին սուտ է, կ'փութայ խրատուց դարմաններ մատուցանել զորս Հոգաբարձութիւնս ոչ թէ միայն իրանից, այլև ամենայն Հայ անհատէն ուրախութեամբ կ'ընդունի և շնորհակալութիւն ընդ այնր կ'փոխարինէ, եթէ նկատէ նորա մէջ բարեմտութիւն և ճշմարտութիւն. ապա ուրեմն թող բարեհաճի նաև ընդունել Հոգաբարձութիւնս իւր վերայ անկեղծ կարեկցութիւնը և խրատական դարմանները իւր ճշմարիտ բարոյական հիւանդութեան վերայ, որով ամեն ժամանակ կախտանայ, երբեմն ծանր և երբեմն թեթև, և իւր հասարակաց լրագրական պարտքը մոռանալով շատ անգամ կարծես շողքորթութեան իբրև մեր հին Հայ նախարարական ցեղերու պատմագրաց երևոյթ կ'ստանայ, սակայն երանի թէ նոցա ճշմարտութեան նա և, բայց չ'է, այս կենդանարար շաւղէն կ'խոտորի իւր դատողութեանց մէջ կ'սայթաքի, ապա թ՛է ոչ, ի՞նչ կ'նշանակէ ասել. ‹‹ Թէև մենք այս լուրերին հաւատ չ'ենք ընծայում կատարելապէս, բայց և այնպէս յայտնի է որ, այս լուրերը ունին հիմն ›› ։ Զարմանալի հակասական ձեռնարկութիւն, վասնզի եթէ ունին հիմն, ուրեմն պէտք է հաւատ ընծայել կատարելապէս. իսկ եթէ ոչ, պէտք չ'է հաւատալ, և անհիմն լուրերու հաւատալը և նոցա վերայ խօսելը կամ սնոտի տղայամտութիւն է, որոյ վերայ Հոգաբարձութիւնս իրաւամբ կ'ծիծաղի, և կամ թէ մի առանձին անյայտ նպատակ, որով Հոգաբարձութեանս առաջ ինչպէս որ պարոնի ստութիւնը արհամարհելի, նոյնպէս և ցաւակցութիւնը բոլորովին կասկածելի համարուեցաւ և պիտի համարուի. Պէտք է յիշել նա և որ մարդս, որ և իցէ բանի վերայ այն ժամանակ կարող է դատողութիւն անել, երբ որ ի ձեռն լրոց նոյն իրի հանգամանաց վերայ իսկութեամբ վերահասու եղած գտնուի, և կամ անձամբ ականատես լինի. Իսկ արդ Պ. Սիմէօնեանցն ոչ անձամբ տեսած է, և ոչ լուրերու կ'հաւատայ, ուրեմն ուստի գիտէ դպրոցիս հանգամանքը. ո՞ր գաղտնեաց աստուածուհին իրեն կ'թելադրէ. Այս տեղից պարզապէս կ'երևի որ, Պարոնը քաջ կ'զգայ իւր թղթակցի ստութիւնը, բայց իւր ցանկութեան դէմ կ'համարի, որ այդ լուրը սուտ լինի, այն պատճառաւ նախ կժխտէ, բայց վերջ զղջալով անհիմն կերպով կ'հաստատէ. ի՞նչ խորհրդաւոր հնարագիտութիւն.

Ի Վերջոյ Հոգաբարձութիւնս ինքն զինքն իւր պաշտօնատարութեան մէջ ճշմարտութեամբ անբասիր գտնելով և դպրոցս ըստ ամենայնի իւր դրութեան և նպատակին համեմատ բարեկարգութեան մէջ տեսնելով՝ կ'կրկնէ Շնորհալւոյն բարեհամբոյր խօսքը, որ առ ժպիրհ ոմն ‹‹ ծանիր և զայս, զի զիս թէև ամենայն լեզուք գովեսցեն յայն բարի, որ ոչ է առ իս, հողմոց հնչմունք վարկանիմ. և եթէ պարսաւէ ոք, և դատի յայն ինչ, որ ի մտացս խղճէ ոչ դատիմ, ոչ փոյթ ինչ առնեմ ›› ։

Խմբագրութենէդ կ'խնդրէ Հոգաբարձութիւնս իւր այս արդարացի ձայնը բոլոր Հայ հասարակութեան հաղորդել ազգաշահ լրագրոյդ միջոցաւ ի լոյս ճշմարտութեան.

Հոգաբարձական Ատեն. — Հոգ.
[illegible]. Հայ. Պ. [illegible]
Յակոբ Մելիք Շահնազարեանց
Օտարեան Աղամալեանց
Գաբրիէլ Պողոսեանց
Աբէնադղէր Ս. Հասան
Ջալալեանց

Ի 21 Մայիսի 1871 ամ
Ի Բ. Շուշի.

ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑ ՀԱՅՈՑ

ՆՈՐԳԱՅ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Անցեալներումս կարդացինք մի ուրախաշարժ յօդուած, Արարատ պատուական ամսագրոյ Յունվար ամսի թերթերում՝ թիւ ինն (9)՝ երես 201, այն է Բաղաքամասին Նորգայ երկսեռ Դպրոցաց և բարեկրօն Պօղոս Աւագ քահանայի ուսումնարանաց հաստատութեանն սկզբնապատճառ լինելու, Պ. Վ. Բաղդասարեանցի գրուած,